ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

20 դեկտեմբերի 2023 թվականի թիվ 110-Ա

ք. Երևան

«ՏՈՍՊԱ» ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒԺԻ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ ***Հանձնաժողով***), ուսումնասիրելով **2023 թվականի նոյեմբերի 27-ին** իր նախաձեռնությամբ հարուցված **թիվ 44** վարչական վարույթի նյութերը, ***պարզեց.***

Հանձնաժողովը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ՝ ***Օրենք***) վերապահված վերահսկողական գործառույթներն իրականացնելիս լսողական մեդիածառայություն մատուցող «ՏՈՍՊԱ» ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՓԲ ընկերության (այսուհետ՝ ***Լսողական ծրագրեր հեռարձակող կամ Ընկերություն***) կողմից հեռարձակվող «ՍՊՈՒՏՆԻԿ ԱՐՄԵՆԻԱ» լսողական ծրագրի 2023 թվականի նոյեմբերի 17-ի ձայնագրության մշտադիտարկման արդյունքում արձանագրել է Օրենքի **7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ եւ 3-րդ կետերի պահանջների խախտման փաստ:**

Հանձնաժողովը, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով, 2023 թվականի նոյեմբերի 27-ին Լսողական ծրագրեր հեռարձակողի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի կողմից Հեռարձակողի գործունեության մշտադիտարկման արդյունքների հիման վրա 2023 թվականի նոյեմբերի 27-ին կազմված մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրությունը (այսուհետ՝ ***Արձանագրություն***):

Ըստ Արձանագրության՝

Լսողական ծրագրեր հեռարձակողի «Սպուտնիկ Արմենիա» լսողական ծրագրի 2023 թվականի նոյեմբերի 17-ի եթերում ժամը՝ (18:07-ին) **«Աբովյան թայմ» հաղորդման** հեռարձակման ընթացքում հաղորդավարի կողմից հնչեցվել է՝

«(…) եթե առաջ կոնցեպտն էր՝ Ղարաբաղը տանք, հանգիստ ապրենք, հիմա՝ Տավուշը տանք, հանգիստ ապրենք, Սյունիքը տանք հանգիստ ապրենք»:

Արձանագրության համաձայն՝ նշված արարքները համապատասխանում են Օրենքի **7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի** հատկանիշներին:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2023 թվականի նոյեմբերի 27-ին ծանուցել է Լսողական ծրագրեր հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող է ներկայացնել պարզաբանումներ և բացատրություններ:

Վարչական վարույթի ընթացքում Լսողական ծրագրեր հեռարձակողը գրությամբ հայտնել է հետևյալը.

«...արձանագրության մեջ նշված ողջ կոնտենտը չի պատկանում մեզ. հեռարձակումն իրականացնում ենք վերջինիս թույլտվության հիման վրա. այդ կապակցությամբ արդեն իսկ դիմել ենք կոնտենտի սեփականատիրոջը (գրության պատճենը կցվել է) *հետայսու բացառել մեր ռադիոալիքի միջոցով սփռվող տեղեկատվության մեջ համանման դեպքերը:....:*

....Ինչ վերաբերվում է «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 7-րդ հոդվածի առաջին մասի երկրորդ և երրորդ ենթակետերի խախտումներին, ապա այս մասով ևս գտնում ենք,որ վկայակոչված արարքները քննարկվող իրավանորմի խախտում չեն հանդիսանում հետևյալ հիմնավորմամբ: Այսպես, ըստ քննարկվող կարգավորման՝ հեռարձակողները պետք ա ապահովեն՝

ա) ներկայացված տեղեկություններում սխալների առկայության դեպքում՝ սեղմ ժամկետում միևնույն հաղորդման, իսկ հնարավորության բացակայության դեպքում՝ այլ հաղորդման ժամանակ այդ մասին իրազեկումը.

բ) իրազեկումը՝ ներկայացված փաստերի անանուն կամ հավաստիությունը բավականաչափ չստուգված աղբյուրների վերաբերյալ:

Արձանագրության մեջ վկայակոչված հաղորդումների ընթացքում տեղեկատվությունը տարածողները անմիջականորեն հայտնի են, որ տարածվող տեղեկատվությունը հանդիսանում է իրենց սուբյեկտիվ կարծիքը որպիսի պայմաններում կարծում ենք անհնար է կիրառել «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 7-րդ հոդվածի առաջին մասի երկրորդ և երրորդ ենթակետերը: Քննարկվող իրավիճակում նախ պետք է տեղեկատվությունը չլինի հաղորդավարի սուբյեկտիվ կարծիքը և երկրորդ այն պետք է փաստական տվյալ լինի ու չհամապատասխանի օբյեկտիվ իրականությանը: Տվյալ պարագայում մենք գործ ունենք վերլուծության, սեփական եզրահանգումները ներկայացնելու և ոչ սեփական հանգամանքների խեղաթյուրման հետ: Ստեղծված իրավիճակում կարծում ենք ոչ թե «Տեսալսողական մեդիայի մասին օրենքի» համապատասխան հոդվածների խախտման մասին կարող է խոսք գնալ, այլ բավարար հիմնավորման պարագայում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածով նախատեսված վնասի հատուցման, ինչը դուրս է Հեռուստատեսության և ռադիոյի

հանձնաժողովի վերահսկողության տիրույթից և հանդիսանում է մասնավոր իրավահարաբերություն: Մյուս տեսանկյունից Հեռարձակողի անանուն կամ չստուգված աղբյուրների վերաբերյալ իրազեկման պարտավորությունը քննարկվող դեպքում ընդունելի չէ, քանի որ ինչպես արդեն նշեցինք երկու դեպքում էլ հաղորդման ընթացքում հայտնվում է, որ ներկայացվող տեսակետը այն արտահայտողի սուբյեկտիվ կարծիքն է: Միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ արձանագրության մեջ «Աբովյան թայմ» հաղորդման ընթացքում տեղեկատվությունը հստակ հայտնում է, որ տարածվող տեղեկատվությունը այն տարածողի սուբյեկտիվ կարծիքն է, ինչը տեղ չի գտել արձանագրության մեջ. կարծում ենք քննարկվող հանգամանքները կարևոր է արարքը որակելու տեսանկյունից»:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

Մինչ հաղորդավարի կողմից արտահայտած մտքերի վերլուծությանն ու գնահատական տալն անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ սահմանափակ ռեսուրս հանդիսացող հաճախականություններով հեռարձակվող «Սպուտնիկ Արմենիա» լսողական ծրագրին: Ի տարբերություն սահմանափակ ռեսուրս հանդիսացող հաճախականություններով հեռարձակվող մյուս լսողական ծրագրերի՝ Ընկերության կողմից վերահեռարձակվող «Սպուտնիկ Արմենիա» լսողական ծրագրի հիմնադիրը Ռուսաստանի Դաշնության Նախագահի 09 դեկտեմբերի 2013 թվականի N 894 հրամանագրի (այսուհետ՝ ***ՌԴ Նախագահի հրամանագիր***) 3-րդ կետով ստեղծված «Ռոսիյա սեգոդնյան» է: Այսպես, ՌԴ Նախագահի հրամանագրի 3-րդ կետի համաձայն՝

«Ստեղծել պետական դաշնային ունիտար ձեռնարկություն՝ ««Ռոսիյա սեգոդնյա («Россия сегодня»)» «միջազգային տեղակատվական գործակալություն»»:

Ստացվում է, որ Լսողական ծրագրերի հեռարձակողն իրականացնում է ռուսական պետական տեղեկատվական գործակալության վերահաիաղորդումը: Հաշվի առնելով այս կարեւորագույն հանգամանքը՝ վստահաբար կարող ենք ասել, որ վերջինս՝ որպես այլ պետության կողմից հիմնադրված տեղեկատվական գործակալություն, պետք է դրսևորի առավելագույն կշռադատված խմբագրական քաղաքականություն՝ բացառելով այնպիսի հաղորդումների հեռարձակումը, որը կարող է ստվերել կամ խաթարել հայ-ռուսական փոխահարաբերությունները:

Հարկ ենք համարում արձանագրել, որ քննարկվող հաղորդման ընթացքում հաղորդավարը բացահայտ խախտել է Օրենքի **7-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի** պահանջը.

«իրազեկումը՝ ներկայացված փաստերի անանուն կամ հավաստիությունը բավականաչափ չստուգված աղբյուրների վերաբերյալ:»:

Հաղորդման ընթացքում հնչել են այնպիսի կարծիքներ և պնդումներ, որոնք ոչ միայն չեն համապատասխանում իրականությանը, այլև կարող են առաջացնել տագնապային տրամադրություն, ինչպես նաև հաղորդման ընթացքում հնչեցվել են ոչ հավաստի կամ հավաստիության բավարար չափ չունեցող, չստուգված աղբյուրներից սնվող տեղեկություններ: Ավելին, հաղորդավարը ոչ միայն չի փորձել շտկել իր խոսույթը, այլեւ հաղորդման ողջ ընթացքում շարունակաբար գործածել է համանուն բառամթերք եւ ցուցադրել նույն համարժեք գործելաոճը:

Այժմ, անդրադառնալով ևս մեկ անգամ Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջին, նշենք, որ Օրենսդրի կողմից նման կանոնակարգման նպատակն ամենևին էլ ինքնանպատակ չի: Տեսալսողական մեդիայի բնագավառում ծառայություն մատուցող յուրաքանչյուր սուբյեկտ պետք է լսարանին մատուցի հավաստի տեղեկություն, խուսափի հասարակության շրջանում խուճապ առաջացնող հայտարարություններ տարածելուց: Իսկ ինչին ենք մենք ականատես լինում քննարկվող հարցի շրջանակում: Մենք բախվում ենք հաղորդավարի կողմից **հավաստիության բավարար աստիճան չունեցող տեղեկության ոչ միայն տարածման, այլև վերջինիս կողմից այդպիսի տեղեկությունները որպես բացարձակ ճշմարտության ներկայացում՝ առցանց իրազեկման վերջիններիս ոչ հավաստի լինելու վերաբերյալ:** Անհասկանալի է, թե որտեղից է հաղորդավարը վերցրել, որ քննարկվող հարցի վերաբերյալ առկա է նման հայեցակարգ՝ որեւէ մարզ հանձնելու եւ հանգիստ ապրելու վերաբերյալ: Հեղինակը որևէ կերպ չի իրազեկում, թե տվյալ, ենթադրյալ հայեցակարգի հեղինակը ո՞վ է, որտե՞ղ է այն ձևակերպված եւ ինչպե՞ս: Հաշվի առնելով Արցախա-ադրբեջանական վերջին պատերազմի, ինչպես նաև Արցախի հայաթափման աղետալի հետևանքները նման ձևակերպումները որևէ կերպ չեն կարող տեղ գտնել սահմանափակ ռեսուրս հանդիսացող հաճախականություններով հեռարձակվող տիրույթում:

Հանձնաժողովը որևէ կերպ չի միջամտում խմբագրական քաղաքականությանը, սակայն Հանձնաժողովին տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրությամբ վերապահված է տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող լիազորությամբ, որն, ի թիվս այլնի, ներառում է, տեսալսողական և լսողական մեդիայի ծառայություն մատուցող անձանց կողմից տրամադրվող տեղեկության աղբյուրների **անանունության և/կամ հավաստիության բավականաչափ չստուգված աղբյուրների վերաբերյալ՝** Հեռարձակողների կողմից լսարանին իրազեկելու պարտականության նկատմամբ վերահսկողության իրականացումը:

Ինչպես կարող ենք տեսնել Արձանագրությունից, «Աբովյան թայմ» հաղորդաշարի հաղորդավարը ոչ միայն որևէ կերպ չի իրազեկում իր կողմից հնչեցված, այսպես կոչված, պնդումների **աղբյուների ոչ բավականաչափ ստուգվածության մասին,** այլև ողջ թողարկման ընթացքում իր հյուրի հետ միասին կատարում է պնդումներ, որոնց հավաստիության աստիճանի մասին որևէ հիշատակում չկա, ինչպես նաև սեփական կարծիքները ներկայացվում են որպես բացարձակ ճշմարտություններ:

Անդրադառնալով հաղորդման հեղինակի կողմից հնչեցված ենթադրյալ հայեցակարգի մասին, որտեղ հնչեցվում են Հայաստանի Հանրապետության տարբեր մարզեր հանձնելու եւ հանգիստ ապրելու մասին՝ հարկ ենք համար արձանագրել, որ այս համատեքստում Հայաստանի Հանրապետության վարչապետը քանիցս անդրադարձել է Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության անխախտելիության կարևորության մասին: Այս մասին քանիցս հայտարարվել է թե՛ Ազգային ժողովում, թե՛ Կառավարության նիստերին, եւ թե առհասարակ միջազգային ատյաններում, միջազգային տարբեր գործընկերների հետ հանդիպումների ընթացքում, որոնք հասնելի են Կառավարության և Հանրապետության վարչապետի պաշտոնական կայքէջերում: Ավելին, Հանրապետության վարչապետը Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության անխախտելիության մասին խոսել է նույնիսկ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր Ասամբլեայի այս տարվա նստաշրջանի ընթացքում: Ուստի, եթե լսողական հաղորդման հեռարձակման ընթացքում հաղորդավարը հնչեցնում է այնպիսի կարծիք, պնդում կամ կատարում է այնպիսի հայտարարություն, որը վերաբերում է Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականությանը, հատկապես վերջինիս խախտմանը, ապա նա պետք է իր պնդումները հիմնավորող փաստեր ներկայացնի, ինչպես նաև նշի իր կողմից տարածվող տեղեկության աղբյուրը և վերջինիս արժանահավատության մասին հստակ տեղեկատվություն: Ինչի վերաբերյալ որևէ նշում չի կատարել:

Ավելին, «Զանգվածային լրատվության մասին» օրենքի **9-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը** սահմանում է՝ *«հրապարակային ելույթի հրապարակման, պետական մարմինների պաշտոնական փաստաթղթերի, լրատվության այլ միջոցի կամ հեղինակային որևէ ստեղծագործության բովանդակած տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ վերարտադրությունն է, և դա տարածելիս ինքը կատարել է հղում այդ աղբյուրին: Սույն կետով նախատեսված դեպքում լրատվական գործունեություն իրականացնողը չի ազատվում տեղեկատվության տարածման համար պատասխանատվությունից, եթե այն չնույնականացվող աղբյուրի տարածած տեղեկատվության վերարտադրությունն է՝ անկախ այդ չնույնականացվող աղբյուրին հղում կատարելու հանգամանքից:»:* Տվյալ դեպքում հղում չի կատարվել որևէ պաշտոնական փաստաթղթի, հայտարարության կամ այլ զանգվածային լրատավամիջոցի, սակայն քննարկվող իրավիճակում հաղորդման հեղինակն ու վարողն իր կողմից հնչեցված մտքերը մատուցում է որպես պետական քաղաքականություն և/կամ պետական քաղաքականության մի մաս:

Վարչական լսումների ընթացքում Ընկերության ներկայացուցիչը ևս մեկ անգամ պնդեց իրենց կողմից ներկայացված դիրքորոշումը և նշեց, որ Արձանագրությունում նշված «Աբովյան թայմ» հաղորդման ընթացքում տարածվող տեղեկատվությունը այն տարածողի սուբյեկտիվ կարծիքն է, և դա Օրենքի տեսանկյունից չի կարող դիտարկվել որպես օրենսդրությամբ արգելված հակաիրավական արարք: Ներկայացուցիչը ևս մեկ անգամ բարձրաձայնեց, որ Արձանագրությունում ամրագրված դրույթները չեն կարող հանդիսանալ

օրենսդրությամբ ոչ հավաստի կամ հավաստիության բավարար չափ չունեցող, չստուգված աղբյուրներից սնվող տեղեկություններ:

Ընկերության ներկայացուցչի հետևյալ պնդման վերաբերյալ Հանձնաժողովն արձանագրում է, որ այո՛, տվյալ դեպքում Ընկերությունը հանդիսանում է Հանձնաժողովի կողմից լիցենզավորված անձ, որը ենթադրում է, որ լսողական մեդիա ծառայություն մատուցողը խմբագրական պատասխանատվություն է կրում իր կողմից հեռարձակվող մեդիա արտադրանքի բովանդակության համար:

Ամփոփելով վերոշարադրյալ մտքերը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ.

Օրենքի **7-րդ հոդվածով** սահմանված են տեսալսողական հաղորդումներում հավաստի տեղեկատվության ապահովման դեպքերը, մասնավորապես ***1-ին մասի 2-րդ կետի համաձայն***՝ *ներկայացված փեղեկություններում սխալների առկայության դեպքում՝ սեղմ ժամկետում միևնույն հաղորդման, իսկ հնարավորության բացակայության դեպքում՝ այլ հաղորդման ժամանակ այդ մասին իրազեկումը,* իսկ **3-րդ կետի** համաձայն՝ Հեռարձակողները պետք է ապահովեն՝ *«իրազեկումը՝ ներկայացված փաստերի անանուն կամ հավաստիությունը բավականաչափ չստուգված աղբյուրների վերաբերյալ:»:*

Համաձայն Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով, իսկ նույն հոդվածի 8-րդ և 9-րդ մասերը սահմանում են՝

«8.Մշտադիտարկման արդյունքներով կարգավորող պետական մարմնի ներկայացուցիչը մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ կազմում է արձանագրություն:

9.Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են մշտադիտարկման արդյունքների համառոտ շարադրանքը, ինչպես նաև վարչական վարույթ հարուցելու կամ հարուցված վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները»:

Օրենքի **55-րդ հոդվածի 1-ին մասի** համաձայն՝ *Կարգավորող պետական մարմնիկողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.*

1) գրավոր նախազգուշացում.

2) տուգանք.

3) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության կասեցում.

4) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Օրենքի **57-րդ հոդվածի 18-րդ մասը** սահմանում է՝ *Սույն օրենքի 7-րդ հոդվածի պահանջները խախտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:*

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ եւ 3-րդ կետերով, 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, 42-րդ հոդվածով, 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 57-րդ հոդվածի 18-րդ մասով՝ ***Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը որոշեց.***

1. «ՏՈՍՊԱ» ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՓԲ ընկերության նկատմամբ կիրառել «Տեսլասողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 18-րդ մասով սահմանված տույժը՝ տուգանելով նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ՏՈՍՊԱ» ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՓԲ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

20 դեկտեմբերի 2023թ.
ք. Երևան